ՈՒԺի մեջ է 2026թ. ապրիլի 14-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան _____

20 մարտի 2026թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է Սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել Սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար Սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Սույնով հայտնում ենք, որ Բանկի հանդեպ ընթացիկ և խնայողական հաշվի հետ կապված բոլոր պարտավորությունները Բանկի կողմից լրիվ կամ մասնակի կհաշվանցվեն Հաճախորդների Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից:

9. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1] Երևանի ժամանակով ժամը 9:30-17:30 («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝ բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:00-00:00), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-21:30):
- հեռահար՝ acba digital համակարգով և ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ ցանկացած օր՝ առանց ժամային սահմանափակման, եթե տվյալ գործարքի կատարման համար Բանկի ներքին ընթացակարգերով այլ սահմանափակում նախատեսված չէ:

- ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

Բանկում գործառնությունների ձևակերպման համար գործառնական օր են համարվում երկուշաբթիից կիրակի օրերը՝ ժամը 9:00-ից 22:00-ը:

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

10. Կատարվող գործառնությունների նպատակն ու իրական շահառուներին պարզելու նպատակով Բանկն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, պարզաբանումներ և նյութեր և կարող է կասեցնել գործառնությունները կամ հրաժարվել դրանք կատարելուց, եթե Բանկի կարծիքով գործարքների հիմնավորող բավարար ապացույցներ չեն ներկայացվում: Բանկը կարող է սահմանափակումներ կիրառել նաև առանձին ծառայությունների գծով, օրինակ՝ փոխանցումների կատարման և/կամ փոխանցումների ստացման արգելք, այդ թվում՝ Բանկի կողմից տարանցիկ դասակարգված գործարքներ:

11. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

12. Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
25. Գումարի կանխիկ մուտքագրում	
- մինչև 50 000 ՀՀ դրամը ներառյալ[2] - 50 000 ՀՀ դրամից ավելի	500 ՀՀ դրամ անվճար
- ԱՄՆ դոլար	անվճար
- եվրո (բացառությամբ 500 եվրո անվանական արժեքով թղթադրամների, որոնք Բանկի կողմից չեն ընդունվում)	անվճար
- բրիտանական ֆունտ ստերլինգ, շվեյցարական ֆրանկ[3] (Բանկը սպասարկում է բրիտանական ֆունտ ստերլինգ և շվեյցարական ֆրանկ արժույթներով միայն նոր թողարկման պոլիմերային թղթադրամները) - հաշվին մուտք անելու դեպքում	1%
- ՌԴ ռուբլի (բացառությամբ 10 և 50 ՌԴ ռուբլի անվանական արժեքով թղթադրամների, որոնք Բանկի կողմից չեն ընդունվում)[4] - հաշվին մուտք անելու դեպքում - առանց հաշվի բացման հատուկ համակարգերով փոխանցում կատարելու դեպքում - առանց հաշվի բացման հատուկ համակարգերով ստացված գումարները ՌԴ ռուբլով հաշվին մուտքագրելու դեպքում - ժամկետային ավանդ ներդնելու դեպքում	1.5% - անվճար - անվճար - անվճար, եթե ներդրված ավանդը հաճախորդի պահանջով չի դադարեցվել երեք ամսից շուտ, այլապես գանձվում է ավանդի ներդրման պահին Բանկում գործող մուտքագրման միջնորդավճարը
ՀՀ մետաղադրամների մուտքագրում մեկ գործառնության ընթացքում՝	
Յուրաքանչյուր նոմինալ ՀՀ մետաղադրամից մինչև 50 հատ (ներառյալ)	անվճար
Յուրաքանչյուր նոմինալ ՀՀ մետաղադրամից 51 հատ և ավելի քանակի դեպքում՝	
- Բանկի հաճախորդների համար	1%, նվազագույնը 1 000դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- Բանկի հաճախորդ չհանդիսացող անձանց համար	3%, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
ՀՀ մետաղադրամների տրամադրում մեկ գործառնության ընթացքում՝	
Յուրաքանչյուր նոմինալ ՀՀ մետաղադրամից մինչև 50 հատ (ներառյալ)	անվճար

[2] Սույն սակագինը սահմանվում է անվճար՝ նոր ավանդի ներդրման, ավանդային հաշվի համալրման, միջնորդավճարի (սպասարկման վարձի) գանձման, ԳՓՄՄ անդամագրության վճարի մուտքագրման, կոմունալ վճարման, միաժամանակ մի քանի գործարքի, փոխանցման կատարման նպատակներով և տերմինալի կողմից չսպասարկվող հաշիվներին (օրինակ՝ ԴԱՀԿ արգելանքի տակ գտնվող հաշիվ, դուրսգրված վարկային հաշիվ և այլն) կանխիկի մուտքագրման դեպքերում:

[3] Սույն սակագինը վերաբերում է նաև առանց հաշվի բացման ներբանկային և միջազգային փոխանցման նպատակով գումարի կանխիկ մուտքագրմանը:

[4] Սույն սակագինը վերաբերում է ինչպես կանխիկ մուտքագրված գումարի (այդ թվում՝ նաև ժամկետային ավանդի) կանխիկ տրամադրմանը նույն մասնաճյուղում, այնպես էլ Բանկի այլ մասնաճյուղերում: ՌԴ ռուբլով տրամադրված վարկերի մարումներ իրականացնելու համար հաշվին ՌԴ ռուբլի մուտք անելու դեպքում սակագներով սահմանված միջնորդավճարը չի գանձվում:

Յուրաքանչյուր նոմինալ ՀՀ մետաղադրամից 51 հատ և ավելի քանակի դեպքում՝	
- Բանկի հաճախորդների համար	1%, նվազագույնը 1 000դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- Բանկի հաճախորդ չհանդիսացող անձանց համար	3%, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
Սույն կետի մասով հաճախորդ է համարվում այն անձը, ով օգտվում է Բանկի որևէ պրոդուկտից	
Արտարժութային մետաղադրամներով գործարքներ չեն իրականացվում	
26. Հաշվին կանխիկ մուտքագրված գումարի կանխիկ տրամադրում[5]	անվճար
27. Առանց հաշվի բացման ներբանկային փոխանցումներից ստացված գումարի կանխիկ տրամադրում	
- ՀՀ դրամով	0.2%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ: Ապահովագրական ընկերու-թյուններից ստացված փոխհա-տուցման գումարի վճարում՝ 0.2%, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ
- արտարժույթով *փոխանցումներն իրականացվում են միայն փոխանցվող գումարի կանխիկ մուտքագրման դեպքում*	0.3%, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ
28. Անկանխիկ մուտքից գումարի կանխիկ տրամադրում[6]	
- ՀՀ դրամով	0.3%, նվազագույնը՝ 200 ՀՀ դրամ
ԱՄՆ դոլարով, եվրոյով, բրիտանական ֆունտով, շվեյցարական ֆրանկով	1%, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ
ՌԴ ռուբլով	0.3%, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ
29. Բանկային ավտոմատացված մեքենայի միջոցով ընթացիկ հաշվից գումարի կանխիկ տրամադրում	անվճար
30. Անհատ ձեռնարկատեր հաճախորդի ընթացիկ հաշվից կատարված փոխանցումներ	
30.1. Անհատ ձեռնարկատեր հաճախորդի ընթացիկ հաշվին կատարված մուտքից իր՝ որպես ֆիզիկական անձի անունով բացված անվճար կանխիկացման հնարավորություն տվող քարտի քարտային հաշվին գումարի փոխանցում	
- ՀՀ դրամով	0.3%, նվազագույնը՝ 200 ՀՀ դրամ
- արտարժույթով	0.5 %, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ
30.2. Անհատ ձեռնարկատեր հաճախորդի ընթացիկ հաշվին կատարված մուտքից իր՝ որպես ֆիզիկական անձի անունով բացված ընթացիկ հաշվին գումարի փոխանցում և այնուհետև իր կամ այլ ֆիզիկական անձի անվճար կանխիկացման հնարավորություն տվող քարտի քարտային հաշվին գումարի փոխանցում	

[5] Սույն սակագինը վերաբերում է ինչպես կանխիկ մուտքագրված գումարի (այդ թվում՝ ժամկետային ավանդի, կանխիկ ընդունող սարքավորումներով դրամային հաշիվներին մուտքագրված գումարի, առաջնային տեղաբաշխումից ձեռք բերված Բանկի պարտատոմսերի արժեկտրոնների վճարման, վաճառքի և մարման ժամանակ) կանխիկ տրամադրմանը նույն մասնաճյուղում, այնպես էլ Բանկի այլ մասնաճյուղերում: Սույն սակագինը չի տարածվում Բանկի մասնաճյուղերում կանխիկ գումարի փոխարկումով արտարժութային հաշիվներին գումարի մուտքագրմանը:

[6] Սույն սակագինը սահմանվում է 0%՝ Սոցիալական փաթեթի հաշիվներից կանխիկացումների դեպքում, Բանկի հետ ապառիկ վաճառքի և POS-տերմինալների և առցանց վճարումների սպասարկման գծով համագործակցության պայմանագրեր ունեցող հաճախորդների համար (այդ պայմանագրերի շրջանակներում մուտքագրված գումարների մասով), յուրաքանչյուր վարկի գծով մինչև 2 500 000 ՀՀ դրամ (ներառյալ) կամ 300 000 ՌԴ ռուբլի (ներառյալ) գումարների կանխիկ տրամադրան ժամանակ, Սոցիալական ապահովության ծառայության կողմից փոխանցված կենսաթոշակի, նպաստի, պատվովճարի և այլ պարբերական դրամական վճարի գումարների կանխիկ տրամադրման ժամանակ, Բանկի աշխատակիցների աշխատավարձերի կանխիկացման ժամանակ, անշարժ գույքի գնման հիփոթեքային վարկի դեպքում առուվաճառքի գումարի կանխիկացման համար, արտարժութային հաշիվներին մուտք եղած գումարների փոխարկման և ապա դրանից հետո ՀՀ դրամով կանխիկացման դեպքում, արտարժութային հաշիվներին անկանխիկ մուտքագրված գումարների կրկնակի փոխարկումով ելքագրման, ինչպես նաև անկանխիկ փոխարկումից առաջացած ՌԴ ռուբլու կանխիկացման դեպքում, անկանխիկ մուտքից ձևավորված (համալրված) և առնվազն վեց ամիս ընթացիկ, խնայողական կամ ավանդային հաշվին պահված գումարների կանխիկացման ժամանակ, ավանդների գծով հաճախորդի հաշվին մուտքագրված տոկոսագումարների կանխիկացման ժամանակ, առաջնային տեղաբաշխման ժամանակ Բանկի՝ անկանխիկ վճարման եղանակով ձեռքբերված պարտատոմսերի մարումից, վաճառքից կամ արժեկտրոնների վճարման արդյունքում ստացված անկանխիկ միջոցների կանխիկացման դեպքում, Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերի դիվիդենտների, ինչպես նաև երկրորդային շուկայում Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերի վաճառքից ստացված անկանխիկ միջոցների կանխիկացման դեպքում, ինչպես նաև արագ դրամական համակարգերով ստացված գումարների կանխիկացման ժամանակ:

- ՀՀ դրամով	0.3%, նվազագույնը՝ 200 ՀՀ դրամ
- արտարժույթով	0.5 %, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ
31. Հաճախորդի հաշիվներից գումարի կանխիկ տրամադրման համար (այդ թվում քարտային հաշվից և POS-տերմինալի միջոցով գումարի կանխիկ տրամադրման ժամանակ) հայտի նախօրոք ներկայացման նվազագույն ժամկետը՝	
- նույն աշխատանքային օրվա ընթացքում Բանկից մինչև 10 մլն (ներառյալ) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ ելքագրելու համար	0 օր
- նույն աշխատանքային օրվա ընթացքում Բանկից 10 մլն-ից ավելի մինչև 100 մլն (ներառյալ) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ ելքագրելու համար	1 օր
- նույն աշխատանքային օրվա ընթացքում Բանկից 100 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթից ավել ելքագրելու համար	2 օր
Բանկը կարող է տրամադրել կանխիկ գումարներ նաև սահմանված գրաֆիկից շեղումով կամ առանց նախնական հայտի:	
32. ԱՄՆ դոլարի ընդունում կամ փոխարինում	
- մինչև 1995թ. (ներառյալ) թողարկման ԱՄՆ դոլար անվանական արժեքով բոլոր թղթադրամների դեպքում	5% (ներառյալ՝ ԱԱՀ)
- 1996 - 2003թթ. (ներառյալ) թողարկման 5, 10, 20, 50 ԱՄՆ դոլար անվանական արժեքով թղթադրամների դեպքում	1% (ներառյալ՝ ԱԱՀ)
- 1996 – 2006թթ.(ներառյալ) թողարկման 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով թղթադրամների դեպքում	1% (ներառյալ՝ ԱԱՀ)
33. Պատռվածքներով կամ վնասվածքներով փոխանակման ենթակա թղթադրամների ընդունում կամ փոխարինում հետևյալ արժույթներով	
- ՀՀ դրամ	անվճար
- ԱՄՆ դոլար, եվրո	5% (ներառյալ՝ ԱԱՀ)
- ՌԴ ռուբլի	3% (ներառյալ՝ ԱԱՀ)
34. Դրամական չեկային գրքույկների տրամադրում[7]	
- քաղաքացիներին	2 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատերերին	5 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
35. Չեկային գրքույկի բացակայության դեպքում կանխիկ գումարի վճարում	անվճար
36. Արտարժույթի առքուվաճառք՝	
- Բանկի կողմից սահմանված գումարից[8] պակաս արտարժույթի առք կամ վաճառք	Բանկի կողմից գնանշված առքի և վաճառքի փոխարժեքներով
- Բանկի կողմից սահմանված գումարից[25] ավել արտարժույթի առք կամ վաճառք	պայմանագրային
Բանկի կողմից չեն փոխարինվում կամ փոխարկվում 10 և 50 ՌԴ ռուբլի, 500 եվրո անվանական արժեքով թղթադրամները	
37.Կոմունալ ծառայության դիմաց վճարման վավերապայմանների ուղղում՝ վճարված ամբողջ գումարն այլ բաժանորդի պարտավորության դիմաց գումարի տեղափոխման միջոցով	1 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
38. Վարկի ամբողջական մարում կատարելուց հետո վարկային կոդին և «ԱՊԱՌԻԿ ՏԵՂՈՒՄ» վարկերի համար բացված տարանցիկ հաշվին դրական մնացորդի առկայության դեպքում կանխիկ գումարի տրամադրում	անվճար

[7] Չեկային գրքույկների տրամադրման միջնորդավճարը գանձվում է գրքույկի դիմումի ներկայացման պահին:

[8] Գումարի մեծությունը հրապարակվում է Բանկի ինտերնետային կայքի Փոխարժեքներ բաժնում: Այն սահմանվում է Բանկի գլխավոր գործադիր տնօրենի հրամանով: